ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԵՎ ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐԻ
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
«ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ԱԶԳԱՅԻՆ ՄԱՐՄԻՆ» ՊՈԱԿ
ՏՆՕՐԵՆ

«29» 03 2018թ. N ՆՄ-70

Ձեր՝ «____» _____ 201 թ. N

ՀՀ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ
ԵՎ ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐԻ
ԳԼԽԱՎՈՐ ԽՈՐՀՐԴԱԿԱՆ
ՊԱՐՈՆ ՊԱՎԵԼ ՍԱՖԱՐՅԱՆԻՆ

ՀՀ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ
ԵՎ ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐԻ
ՆԱԽԱՐԱՐԻ ՏԵՂԱԿԱԼ
ՊԱՐՈՆ ԷՄԻԼ ՏԱՐԱՍՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Սաֆարյան,
Հարգելի պարոն Տարասյան,

Ի պատասխան 27.03.2018թ. N 5539 հանձնարարականի՝ «Հետաքննող լրագրողներ» հասարակական կազմակերպության կողմից տրված առաջին հարցադրման վերաբերյալ տեղեկացնում ենք, որ համաձայն ՄՄ ՏԿ 033/2013 տեխնիկական կանոնակարգի գլուխ I, կետ 2-ի և գլուխ II, կետ 5, էջ 14-ի 2-րդ պարբերության՝ «պաստերացված կաթ» արտադրանքը հանդիսանում է «Կաթի և կաթնամթերքի անվտանգության մասին» ՄՄ ՏԿ 033/2013 տեխնիկական կանոնակարգի կարգավորման օբյեկտ:

Երկրորդ հարցադրման վերաբերյալ տեղեկացնում ենք, որ համաձայն «Կաթի և կաթնամթերքի անվտանգության մասին» ՄՄ ՏԿ 033/2013 տեխնիկական կանոնակարգի պահանջների, «պաստերացված կաթ» արտադրանքի նկատմամբ բոլոր պահանջների կիրառումը պարտադիր է (հիմք ՄՄ ՏԿ 033/2013 տեխնիկական կանոնակարգի ընդհանուր դրույթներ, պարբերություն 2):

Ինչ վերաբերում է երրորդ, չորրորդ, հինգերորդ և յոթերորդ հարցադրումներին, ապա տեղեկացնում ենք, որ սննդամթերքի անվտանգության ոլորտում Եվրասիական տնտեսական միության մոտեցմամբ գործում է Մաքսային միության տեխնիկական կանոնակարգերի պահանջների սահմանման և կիրառման «փաթեթային սկզբունքը»: Համաձայն ՄՄ ՏԿ 033/2013 տեխնիկական կանոնակարգի կետ 97-ի՝ կաթի և կաթնամթերքի համապատասխանությունը ՄՄ ՏԿ 033/2013 տեխնիկական կանոնակարգին

ՀՀ, ք. Երևան, Կոմիտասի 49/2 | РА, г. Ереван, Комитаса 49/2 | RA,Yerevan, Komitas 49/2
Հեռ. (010) 20-33-81 | Тел. (010) 20-33-81 | Tel.: (010) 20-33-81
Էլ.փոստ – armnab@armnab.am | Эл.почта: armnab@armnab.am | e-mail: armnab@armnab.am

ապահովում է վերջինիս պահանջների, ինչպես նաև Մաքսային միության այլ տեխնիկական կանոնակարգերի պահանջների ապահովումը, ներառելով ՄՄ ՏԿ 021/2011 «Սննդամթերքի անվտանգության մասին», ՄՄ ՏԿ 022 «Սննդամթերքի մասով մակնշման», ՄՄ ՏԿ 029/2012 «Սննդային հավելումների, բուրավետիչների և տեխնոլոգիական օժանդակ միջոցների անվտանգության մասին» կանոնակարգերի պահանջները, այդ թվում՝ կանոնակարգերին կից ներկայացված ստանդարտների ցանկում ներառված փորձարկման մեթոդները:

Վեցերորդ հարցադրման վերաբերյալ տեղեկացնում ենք, որ փորձարկման արձանագրության աղյուսակի 4-րդ սյունակում 1-ից 5-րդ կետերի համար, բացի ՄՄ ՏԿ 033/2013 տեխնիկական կանոնակարգի նշագրից, անհրաժեշտ էր նշել նաև ՄՄ ՏԿ 021/2011 տեխնիկական կանոնակարգի նշագիրը, քանի որ կիրառված ՄՈՒԿ 4.2.2578-10-ը գործում է ՄՄ ՏԿ 021/2011 տեխնիկական կանոնակարգին կից ստանդարտների ցանկում ներառված ՄՈՒԿ 4.2.590-96-ի փոխարեն (հիմք՝ ՄՈՒԿ 4.2.2578-10, կետ 4): Հարկ եմ համարում նշել, որ «ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅԱՆ» մեջ արդեն իսկ նշված է ՄՄ ՏԿ 021/2011 տեխնիկական կանոնակարգի նշագիրը:

Հարգանքով՝

ՆՈՒՆԵ ՄԿՐՏՉՅԱՆ

Կատարող Ն.Քարամյան
010-20-33-81